ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11. 1955 Общественные науки

Խ. Բարսեղյան

«ՊԱՅՔԱՐ» ԹԵՐԹԻ ԴԵՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1915 թվականին շարունակվում էր առաջին համաշխարհային պատերազմը։ Գնալով այդ սպանդը ավելի մեծ թվով մարդկային կյանքեր էր խլում։ Հայ բուրժուա-նացիոնալիստական տարրերը՝ դաշնակները, «սպեցիֆիկները» և նրանց գեղին մամուլը թունավորում էին բանվորների և գյուղացիների գիտակցությունը։ «Հորիզոն»-ն ու «Մշակ»-ը իրենց թթու նացիոնալիստական հոդվածներով քիչ բացասական դեր չէին կատարում։

Ահա այս պայմաններում էր, որ Անդրկովկասի հայ բոլշևիկները 1915 թվականի աշնանից ձեռնամուխ եղան բանվորական հայերեն թերթի հիմնադրմանը։ Բոլշևիկների այդ նախաձեռնությունը ջերմ պաշտպանություն գտավ բանվորների և գյուղացիների շրջանում։

Նույն թվականի դեկտեմբերի 6-ին (19-ին) Թիֆլիսում լույս է տեսնում «Պայքար» գրական, հասարակական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթի առաջին համարը։ «Պայքար»-ը կոչված էր հայ աշխատավորությանը պաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, պաշտպանել բոլշևիկյան պարտիայի տակտիկան ու ստրատեգիան՝ պատերազմում, մերկացնել հայ բուրժուա-նացիոնալիստական տարրերի, հատկապես դաշնակների դավաճանական քաղաքականությունն ու մեքենայությունները։ Թերթի խմբագրական կազմի մեջ մտնում էին բոլշևիկներ Աս. Մռավյանը և Ս. Խանոյանը։ Մինչև 1917 թվականի հունիսի 10-ը «Պայքար»-ի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեին բոլշևիկները, այդ թվում Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Աբսեն Ամիրյանը, Արտաշես Կարինյանը, Մելիք Մելիքյանցը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կամարին, Ազատ Վշտունին, Սիմակը, բանվոր Գալյագաշը, Հովհ. Պողոսյանը և ուրիշներ։ Թերթի խմբագիր-հրատարակիչը «Պայքար»-ի միակ դրաշար Հովհաննես Սարգսյանն էր (Վանո)։

Նախառևոլյուցիոն բոլշևիկյան հայ պարբերական մամուլի մեջ «Պայքար»-ը համեմատաբար երկար կյանք ունեցավ և ավելի լայն էր նրա կապը ընթերցողների հետ։ Թիֆլիսից, Բաքվից, Գանձակից (Կիրովաբադ), Սուխումից, Քութայիսից, Երևանից, Ալեքսանդրապոլից, Սարիղամիշից, Դարսից և Հայաստանի տարբեր վայրերից բանվորներն ու գյուղացիները նվիրատվություններ էին ուղարկում «Պայքար»-ի ֆոնդին, թղթակցում նրան, անկեղծորեն պատմում իրենց հուզող հարցերի մասին։ Շատ հաճախ նվերներ էին ստացվում նաև վրացի բանվորներից և գյուղացիներից, որոնք գրանով իսկ իրենց հավերաշխությունն էին արտահայտում հայ ժողովրդի նկատմամբ։

1915 թվականին լույս տեսավ «Պայքար»-ի չորս համար, 1916 թվականին՝ հիսուն հինգ, իսկ 1917 թվականին, մինչև հունիսի 10-ը՝ քառասուն մեկ։ Այսպիսով, 18 ամսվա ընթացքում հրատարակվեց «Պայքար»-ի 100 համար։

Թերթի առաջին համարը բացվում է «Հայերը և հարևան ազգերը» առաջնորդող հոդվածով։ Նույն համարում հրապարակված էր Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը», Հակոբ Հակոբյանի՝ «Պահակ», Գուրգեն Հայկունու՝ «Արշալույսի երգ», Ազատ Վշտունու «Աշնան երգերեն» բանաստեղծությունները, Արազու «Կարմիր համբույրը» պատմվածքը, Ս. Խանոյանի «Կովկասյան զեմստվոյի առթիվ» հոդվածը, Աս. Մռավյանի՝ «Աշխեն Աբովյան» մահախոսականը և այլ նյութեր։ «Պայքար»-ի շատ ու շատ նյութեր, ինչպես նշեցինք, նվիրված էին պատերազմի վերաբերյալ բոլշևիկյան պարտիայի ստրատեգիայի և տակտիկայի պաշտպանությանը։

«Պայքար»-ը նախնական շրջանում հալածանքների էր ենթարկվում ցարական գործակալների, հատկապես գրաքննիչների կողմից, բազմաթիվ հոդվածներ իրենց ռևոլյուցիոն բովանդակության պատճառով արգելվել են, իսկ առանձին հոդվածներ լույս են տեսել գրաքննության կողմից խիստ կրճատումներով։ Այդ են վկայում թերթի այն էջերը, որտեղ նույնիսկ ամբողջական սյունակներ բաց են։

Այնուամենայնիվ, գրաքննության այդ ծանր պայմաններում անգամ «Պայքար»-ը կարողանում էր բոլոր հնարավորություններն օգտագործելով արտահայտել հակապատերազմական իր տրամադրությունները, մերկացնել պատերազմի իմպերիալիստական-թալանչիական բնույթը։

1915 թվականի դեկտեմբերի 13-ի համարում տպագրված «Պարսկաստանի ներկա դեպքերի շուրջը» առաջնորդող հոդվածում, թերթը նշել է, որ պատերազմի բախտը չի որոշվում մեկ կամ մի քանի ամիսներում, պատերազմը ծովի նման ենթակա է մակընթացության և տեղատվության, որ ամեն սի քաղաքական պարտիա, եթե նա տարված չէ քաղաքական իլյուզիաներով, պետք է ձգտի ապահովել ժողովրդի ֆիզիկական գոյությունը, զերծ պահել նրան տնտեսական ավերումներից և մտածել նրա քաղաքական ազատագրման մասին։ «Պայքար»-ը իր առաջնորդողներում, թղթակցություններում, տեղերից ստացած նամակներում արտահայտում էր հայ գիտակից բանվորության հակապատերազմական տրամադրությունները, մեծապես նպաստում նրա քաղաքական դաստիարակությանը։ «Պայքար»-ի այն բաց սյուները, որոնց նյութերը հանվել են գրաքննիչի կողմից, առաջին հերթին պարունակել են հակացարական, հակապատերազմական տրամադրություններ և մերկացումներ։

* * *

«Պայքար»-ի գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում բուրժուական նացիոնալիզմի դեմ մղած պայքարը։

Մերկացնելով առաջին իմպերիալիստական պատերազմի թալանչիական բնույթը, թերթը հայ աշխատավորներին օգնում էր հավատարիմ մնալ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, երբեք չհավատալ բուրժուական նացիոնալիստների մեքենայություններին ու խաբեություններին։ «Պայքար»-ում հրապարակված Ստ. Շահումյանի՝ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» (№№ 48, 49, 1916 թ.), Անաստաս Միկոյանի՝ «Պ. Ահարոնյանը իր լռության մասին», «Վրաց նացիոնալիստները և դեմոկրատիան», «Ժամանակավոր կառավարությունը և դեմոկրատիան», «Բրեշկո Բրեշկովսկայան իմպերիալիստական բուրժուազիայի գաղափարախոս» (№ 47, 1916 թ. № 4 (59), 20 (75), 33 (88), 1917 թ.), Ա. Ամիրյանի՝ «Մեր մարքսիստանմանները» (№ 39 (43) 1916 թ.) և այլ

հոդվածներում սպանիչ քննադատության են ենթարկված բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու նրանց իդեոլոգները, հմտորեն շարադրված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։ Պարզաբանելով, որ բուրժուական իդեոլոգիայի հատկանիշներից մեկը նացիոնալիզմն է, Ստ. Շահումյանը նշում է, որ նացիոնալիզմն ու լիբերալիզմն անբաժանելի կերպով կապված են միմյանց հետ։ Նացիոնալիզմն իմպերիալիզմի ժամանակաշրջանում հասնում է իր գագաթնակետին։ «Նացիոնալիզմը նույնպես «իմմաննենտ» է բուրժուական աշխարհայացքին և բուրժուական պրակտիկային»— գրել է Շահումյանը,— ինչպես ինտերնացիոնալիզմը նոր ընկերավարական (սոցիալիստական) աշխարհայացքին։ Ո՞վ չի հասկացել այդ, ո՛վ կարծում է, որ կարելի է ժխտել լիբերալիզմը, իմպերիալիզմը, բայց պահպանել նացիոնալիզմը, ով խոսում է «առողջ» և «անառողջ» նացիոնալիզմի մասին և փորձում է զանազան սոփեստություններով հաշտեցնել նացիոնալիզմը ինտերնացիոնալիզմի և առհասարակ ընկերավարական նոր աշխարհայացքի հետ, նա ոչինչ չի հասկացել ո՛չ լիբերալիզմից և ո՛չ այդ նոր աշխարհայացքից»[1]։

Բուրժուական ինտելիգենցիան ամենից ուժեղ կերպով է հարում նացիոնալիզմին։ Նա նացիոնալիզմի նկատմամբ հաճախ «ավելի արքայական է, քան արքան ինքը»։ Նացիոնալիզմը ժողովրդական մասսաներին սոցիալ-դասակարգային պայքարից հեռու պահելու զենքերից է։ Հայկական ազգային շարժման իդեոլոգիայի մեջ բուրժուական նացիոնալիզմը հանդես է եկել ռազմատենչ ձևով։ Ազգային բացառիկությունը, պատմական հեռավոր անցյալի իդեալականացումը, ազգային սնապարծությունը, ուրիշ ազգերի նկատմամբ ատելություն տածելը և բորբոքելը, ազգը որպես մի միասնական ու միատարր օրգանիզմ ներկայացնելը, ազգի ներսում եղած դասակարգային անտագոնիզմի սքողումը, դասակարգային պայքարի մարելը,— այս բոլորը նացիոնալիզմի բնորոշ գծերն են։ Հայկական բուրժուազիայի նացիոնալիզմին հատուկ է եղել նաև կոսմոպոլիտիզմը, ստորաքարշությունը Եվրոպայի իմպերիալիստների առջև, նրանցից «Հայկական հարցի» «լուծումն» սպասելը, Եվրոպայի ֆետիշացումը, եվրոպական կապիտալիստական ռեակցիոն քաղաքականության գովերգումը, ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, գերմանական իմպերիալիստական գիշատիչ նվաճողների առաջ խնկարկելը, շողոքորթելը ազգային արժանապատվության ոտնահարումը։

Ստ. Շահումյանը մերկացնելով հայ բուրժուազիայի այդ նացիոնալիզմը, պրոլետարիատից և աշխատավոր գյուղացիներից պահանջում էր համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։

1916 թվականից Ա. Միկոյանն ակտիվորեն աշխատակցում է «Պայքար»-ին։ 1916 թվականի նոյեմբերի 27-ի համարում զետեղված «Պ. Ահարոնյանը իր լուության մասին» հոդվածում Ա. Միկոյանը բոլշևիկյան կրքոտությամբ մերկացնում է դաշնակներին և նրանց ակտիվ գաղափարախոս Ահարոնյանին։ Ա. Միկոյանը ցույց է տալիս, որ դաշնակները հայ ժողովրդի շահերի դավաճաններն են. հայ ազգի այդ ցեցերը քողարկվելով կեղծ ֆրազներով, փորձում են ժողովրդին մոլորեցնել և իրենց կողմը նվաճել։ Դաշնակցական գաղափարախոս Ահարոնյանը կաշվից դուրս էր գալիս, որպեսզի հիմնավորի, որ իբր թե «հայ ազգը միատարր է», «նրա մեջ չկա ներքին անտագոնիզմ» և որ

[1] «Պայքար», № 48, 4 դեկտեմբերի, 1916։

«հայը հայ է, ընտրյալ և մյուս ժողովուրդներից բարձր»։ Ա. Միկոյանը ջախջախելով Ահարոնյանի կոսմոպոլիտիզմն ու նացիոնալիզմը, նշել է, որ ամենքին քաջ հայտնի է, որ «...հայ ժողովուրդը ամենևին այնպիսի միաձույլ բնական օրգանիզմ անհատականություն չէ՝ զերծ ներքին պայքարից ու օժտված մի կամքով... որ հայ ժողովուրդը մյուսների մեջ բացառություն չի կազմում...»։ Իր հոդվածում Ա. Միկոյանը զարգացնում է այն միտքը, որ պետք է անողոքաբար քննադատել, անալիզի ենթարկել մեր հասարակական կյանքը, չափել նրա մեջ գործող ուժերը, պարզել նրանց գույները և այսպիսի պատճառաբանված ու նախապատրաստված տակտիկայի միջոցով մի կողմից սնունդ տալ մեր արթնացած ժողովրդի պահանջին, ազատել նրան վնասակար ֆրազեոլոգիայի ազդեցությունից, և մյուս կողմից՝ ֆրազների գերի, բայց դեմոկրատական հավակնություններ ունեցող երիտասարդության աչքերը բացել և նրան նոր ուղի հանել։ «Վրացի նացիոնալիստները և դեմոկրատիան» հոդվածում Ա. Միկոյանը դատապարտում է անհատական տեռորը, այն համարելով թուլության նշան։ Հենց այսպիսի թուլության նշանները,— ասում է Ա. Միկոյանը,— տեսնում ենք վրաց նացիոնալիստական բանակում, ուստի և շնորհավորում ենք վրացի ընկերներին, որ կարողացել են պատռել նացիոնալիզմի քողը, երևան հանել նրա դասակարգային աստառը, տոգորել ժողովրդին նրա իսկական դասակարգային շահերի պաշտպանության գաղափարով՝ ծայրահեղ լարմամբ հասցնելով դասակարգային պայքարը և սնանկացման մատնելով նացիոնալիզմի իդեոլոգիան։

Ստ. Շահումյանը 1916 թվականի սեպտեմբերին բանտարկված էր, երբ լուր ստացավ, որ Կրասնոյարսկի քաղաքային հիվանդանոցում մահացել է իր մերձավոր ընկեր, բոցաշունչ ռևոլյուցիոներ Ս. Սպանդարյանը։ Բանտում Շահումյանը այդ առթիվ հոդված գրեց, որը լույս է տեսել «Պայքար»-ի 1916 թվականի սեպտեմբերի 18-ի համարում՝ «Մեր Սուրենը» խորագրով։

Հայ բուրժուազիայի և նրա կամակատարների ռեակցիոն, հակաժողովրդական և հակահայրենասիրական քաղաքականության մերկացմանն են նվիրված «Պայքար»-ում տպագրված Ա. Մռավյանի, Ա. Ամիրյանի, Ա. Կարինյանի, Մ. Մելիքյանցի և ուրիշների շատ ու շատ հոդվածներ։

Ա. Ամիրյանը իր «Մեր մարքսիստանմանները» ծավալուն հոդվածում ջախջախիչ հարվածներ է հասցրել դաշնակցությանը, «սպեցիֆիզմին», հատկապես նրանց պարագլուխներ Բ. Իշխանյանին, Դ. Անանունին և մյուսներին։

«Պայքար»-ը քայլ առ քայլ մերկացրել է լիբերալ և բուրժուանացիոնալիստական թևերին, դիմակազերծ արել նրանց։ Ա. Ամիրյանը հիշատակված «Մեր մարքսիստանմանները» հոդվածում մերկացնելով «Մշակ»-ի շուրջը համախմբված նացիոնալիստներին՝ Բ. Իշխանյանին, Անանունին, նշել է, որ նրանք ոչինչ չունեն մարքսիզմի հետ, և «...ձգտում են մարքսիզմը միացնել մշակականության հետ։ Այդ պարոնների «ենթարկումը» «Մշակ»-ին «անդրադառնում է նրանց համար որպես պատիվ և նյութական փարթամություն»։ Անձնական տեսակետից պ. պ. մարքսիստանմանները իհարկե չափազանց «խելոք» մարդիկ են, բայց հասարակական տեսակետից դրանք ոնպայման դատարկ մարդիկ են։ Դրանք հանդիսանում են, Էնգելսի արտահայտությամբ, «էժան մատերիալիզմի շրջիկները», մատերիալիստական վեհ ուս-

[1] «Պայքար», № 47 (51), 27 նոյեմբերի, 1916։

մունքի կեղծողները։ Չարժե ափսոսալ նրանց, բայց մերկացնել նրանց անհրաժեշտ է»[1]։

«Պայքար»-ի յուրաքանչյուր համարը,— Ստ. Շահումյանի բնութագրությամբ՝ մի մի կենդանի բողոք է նացիոնալիզմի և նացիոնալիստների դեմ։

* * *

1917 թվականի հունվար-փետրվար ամիսներին ռուսական ցարիզմը բացարձակ կրիզիս էր ապրում։ Բուրժուազիան նպատակ ուներ կրիզիսը լուծել պալատական հեղաշրջման միջոցով, սակայն ժողովուրդը այն լուծեց իր ձևով։ Փետրվարին գործադուլային ալիքը ամբողջ երկրում ծավալվեց, որը հասցրեց փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթությանը։ Ռևոլյուցիան հաղթեց, որովհետև ռևոլյուցիան սկսողը հերոսական բանվոր դասակարգն էր, որը և գլխավորում էր զինվորի շինել հագած գյուղացիների միլիոնավոր մասսաների շարժումը՝ «հանուն խաղաղության, հանուն հացի, հանուն ազատության»։

Ռևոլյուցիայի առաջին իսկ օրերին հանդես են գալիս բանվորական և զինվորական դեպուտատների Սովետները։ Ռևոլյուցիայի, Սովետների, ինչպես նաև երկիշխանության հարցերը գտնվում էին բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ուշադրության կենտրոնում։

Ռոմանովների դինաստիայի ջախջախմամբ խորտակվեց նաև նրա ողորմելի հայ գրաքննիչների իշխանությունը։ «Պայքար»-ն ազատվեց գրաքննիչների քմահաճույքներից և 1917 թվականի մարտի 20-ից (68-րդ համարից) դարձավ բանվորական-մասսայական ամենօրյա ազատ թերթ։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո թերթը՝ մերկացնելով համաձայնողական պարտիաների՝ մենշևիկների ու էսեռների դիմադրությունը, պաշտպանում էր բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից սոցիալիստական ռևոլյուցիային անցնելու բոլշևիկյան լոզունգը։

Ա. Միկոյանը «Պայքար»-ում տպագրած իր «Ժամանակավոր կառավարությունը և հեղափոխական դեմոկրատիան» հոդվածում հայ աշխատավորությանը պարզաբանում է փետրվարյան ռևոլյուցիայի արդյունքները, ստեղծված երկիշխանության՝ բանվորական և զինվորական դեպուտատների Սովետների ու կոնտրռևոլյուցիոն ժամանակավոր կառավարության քաղաքականությունը։ Բանվորական և զինվորական դեպուտատների Սովետները,— գրել է Ա. Միկոյանը,— ռևոլյուցիայի շարժիչ ուժերն են, բանվորների և զորքի կամքի արտահայտիչները, որի հետևում կանգնած է Ռուսաստանի ազգաբնակչության խոշոր մեծամասնությունը, իսկ երկրորդը՝ ժամանակավոր կառավարությունը՝ իր կազմով և ձգտումներով կոնտրռևոլյուցիոն է, բուրժուազիայի շահերի պաշտպանը, որը ոչ միայն չի մասնակցել ռևոլյուցիային, այլև ամեն կերպ աշխատել է խեղդել այն իր բնի մեջ։

Երկիշխանությունը չէր կարող երկար գոյություն ունենալ։ Անհրաժեշտ էր տապալել ժամանակավոր կառավարությունը, որպես ծայրահեղ ռեակցիոն կառավարություն, և իշխանությունն ամբողջովին հանձնել բանվորական և զինվորական դեպուտատների Սովետներին։ «Ուրիշ որևէ իշխանություն,— գրում էր Ա. Միկոյանը,—բացի բանվորների, զինվորների և գյուղացիների խորհրդներից, չէր կարող կատարել այն պատասխանատու դերը, որ դնում է ներկա

[1] «Պայքար», № 39 (43), 25 սեպտեմբերի, 1916։

հեղափոխությունը նրա վրա։ Սպասենք և պատրաստվենք հեղափոխության զարգացման երկրորդ էտապին»[1]։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո «Պայքար»-ը նյութեր էր զետեղում «Հեղափոխությունը Ռուսաստանում», «Ռուսաստանի մեծ հեղափոխությունը» և այլ ընդհանուր խորագրի տակ։ «Քաղաքական դրությունը և մոմենտի պահանջները»[2] առաջնորդող հոդվածում թերթը հաղորդում էր, որ ցարական կառավարությունը տապալված է և հարկավոր է բոլոր միջոցներով օգնել Պետրոգրադի բանվորների և զինվորների դեպուտատների Սովետին։ Դրանից մեկ օր հետո «Պայքար»-ը տպագրում է ՌՍԴԲՊ Կովկասյան շրջանային Կոմիտեի կոչը՝ ուղղված ազգարնակչությանը և զորքին։

«Քաղաքացինե՛ր,— ասված է այդ կոչում,— բանվորների հեղափոխական զորքի ընդհանուր ուժերով հին պետական կարգերին վճռական հարված է հասցված։

Փա՜ռք ու պատիվ հերոսներին, 1905 թվականի մեծ հեղափոխության մարտիկներին, որոնք փտած բյուրոկրատական շենքի անկումը պատրաստեցին։

Փա՜ռք ու պատիվ Պետրոգրադի և Մոսկվայի բանվորներին ու այն օֆիցերներին և զինվորներին, որոնք 1905 թվականի հաղթած ուղիով գնալով, հուլիսի 3-ի ռեժիմին մահացու հարված հասցրին...

Կեցցե՜ բանվորների և զինվորների պատգամավորական խորհուրդները։

Կեցցե՜ հիմնադիր ժողովը»[3]։

Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ա. Ամիրյանը, Շավարշ Գարագաշը և ուրիշներ «Պայքար»-ի էջերից իրենց կրակոտ հոդվածներով մերկացնում էին ժամանակավոր ռեակցիոն կառավարության քաղաքականությունը, հայ աշխատավորությանը կոչ անում՝ համախմբվել բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետների շուրջը, օգնել ռևոլյուցիան հասցնելու իր հաղթական վախճանին։ «Պայքար»-ի 1917 թվականի հունիսի 6-ի համարում Ա. Մռավյանը «Մինիստր Կերենսկին» հոդվածում բացահայտելով ժամանակավոր կառավարության և նրա ղեկավարների դավաճանությունը, գրել էր, որ Կերենսկին ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի մինիստրն է, ուրեմն հեղափոխական ժողովրդի հակառակորդն ու թշնամին։

«Պատմական նոր դարաշրջանը» խմբագրական հոդվածում, որը տպագրվել է 1917 թվականի մարտի 25-ին, թերթը հանգամանորեն խոսում էր ռուսական երկրորդ ռևոլյուցիայի վիթխարի նշանակության մասին, ռևոլյուցիա, որը օրեցօր ընդարձակում, նոր և անսահման հորիզոններ էր բացում մարդկության առաջ։ Ռուսաստանի ռևոլյուցիան,— գրում է «Պայքար»-ը,— միջազգային դեմոկրատիայի համար ամենայայն ասպարեզներ է բացում, չկա այլևս «Եվրոպայի ժանդարմ» ցարական կառավարությունը, «...Բոլոր... երկրները պետք է Ռուսաստանի օրինակին հետևեն»։

* * *

«Պայքար»-ը մեծ տեղ էր տալիս գրականության և արվեստի հարցերին, սիստեմատիկաբար տպագրում էր բանաստեղծություններ, արձակ երկեր, գրա-

[1] «Պայքար», № 20 (75), 7 մայիսի, 1917։
[2] Նույն տեղում, № 9 (64), 5 մարտի, 1917։
[3] Նույն տեղում, № 10 (65), 9 մարտի, 1917։

քննադատական հոդվածներ, գրախոսություններ, անոտացիաներ։ Գրականագիտական հոդվածներում զգալի տեղ էր գրավում պայքարը՝ բուրժուա-նացիոնալիստական և անկումային-դեկադենտական գրականության դեմ, հանուն գրականության պարտիականության և ժողովրդայնության, հանուն պրոլետարական գրականության զարգացման, գրական ժառանգության բոլշևիկյան գնահատման։

«Պայքար»-ի շուրջը համախմբված գրողներն ու գրականագետները՝ Հ. Հակոբյանը, Հ. Կամարին, Ան. Վարդանյանը, Արազին և ուրիշներ իրենց ստեղծագործություններով ոգևորում էին հայ ընթերցողներին, փառաբանում բանվոր դասակարգին։ Չկա թերթի մի համար, որի էջերում զետեղված չլինեն գրականագիտական-գեղարվեստական նյութեր։

* * *

«Պայքար»-ը լեգալ լինելով հանդերձ, հաճախ գրում էր եզեպոսյան լեզվով. արգելված էր նրա էջերում գործածել «սոցիալ-դեմոկրատիա», «հետևողական դեմոկրատիա» և այլ բառերը, արգելված էր գրել պատերազմի մասին։ Թերթի աշխատողները, ունենալով անլեգալ բոլշևիկյան թերթ վարելու հարուստ փորձ, լրագրային զանազան ժանրի նյութերի միջոցով բանվորների հետ խոսում էին նրանց հասկանալի լեզվով։ Առաջնորդող, խմբագրական հոդված, թղթակցություն, նամակ, ֆելյետոն, գեղարվեստական ակնարկ, գրախոսություն, ինֆորմացիա, հրապարակախոսական հոդված, մամուլի տեսություն, այս բոլորն օգտագործվում էին բոլշևիկյան գաղափարները բանվորներին հասցնելու համար։

«Պայքար» թերթի բոլշևիկ հրապարակախոսները՝ օգտագործելով բանվորական-կոմունիստական մամուլի հարուստ փորձը, առաջնորդող հոդվածներում հստակ ուղղություն էին տալիս ընթերցողներին, պայքարի կոչում բանվորներին, գյուղացիներին, օգնում նրանց ճիշտ կողմնորոշվելու պատերազմի և ռևոլյուցիայի հարցերում։ Հատկապես լավ են գրված «Մեր հակառակորդները» (№ 15 (19), 1916 թ.), «Իրար արժեք» (№ 26 (30), 1916 թ.), «Որոշումների երկիր» (№ 32 (36), 1916 թ.), «Պատմական նոր դարաշրջան» (№ 13 (68), 1917 թ.), «Ողջույն «Բրձոլա»-ին» (№ 41 (96), 1917 թ.) և այլ առաջնորդողները։ «Որոշումների երկիր» առաջնորդողում թերթը սուր քննադատության էր ենթարկում ցարական կառավարության քաղաքականությունը, նշում, որ կառավարությունը ժողովրդի աչքերին թոզ փչելու համար անվերջ որոշումներ, օրենքներ է ընդունում, և նույնպիսի արագությամբ էլ մոռանում դրանց իրականացումը։ Թերթը պահանջում էր մասսաներից՝ ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքական կյանքին, չհավատալ կառավարության կեղծ խոստումներին և պայքարով նվաճել իր իրավունքները, պաշտպան կանգնել իր շահերին։ Ճիշտ է, փշոտ է այդ ճանապարհը և կապված բազմաթիվ դժվարությունների հետ,— գրում է թերթը,— բայց մինչև ինքը՝ ժողովուրդը հասարակական գործունեության ասպարեզ դուրս չգա, նրա մասին ցարական կառավարությունը երբեք չի մտածի և նրան կհուսադրի դատարկ որոշումներով։

«Պայքար»-ի առաջնորդողների թեմատիկան բազմազան էր, քաղաքական-հասարակական հարցերից մինչև տնտեսական խնդիրներ, ժողովուրդների բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի պրոպագանդայից մինչև բուրժուական նացիոնալիզմի ու նացիոնալիստների մերկացում։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո թերթը հատուկ տեղ էր տալիս «Ամբողջ իշխանու-

թյունը Սովետներին» լոզունգի պարզաբանմանը, աշխատավորներին մոբիլիզացնում ռևոլյուցիայի առաջին էտապից երկրորդին անցնելու համար։

«Պայքար»-ը մեծ տեղ էր տալիս աշխատավորական նամակներին, թղթակցություններին։ Բանվորներն իրենց նամակներում պատմում էին, թե ինչ հոգսեր ունեն, ինչ են ցանկանում իրենց օրգանից։

Քաղաքական նպատակասլացությամբ են հագեցված Մ. Մելիքյանցի նամակները («Բանվորի զրույցները»), որոնք վառ պատկերացում են տալիս Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարի մասին։

Թերթի առաջին համարը լույս տեսնելու տարեդարձի օրը բազմաթիվ շնորհավորական և ողջույնի նամակներ ու թղթակցություններ են ստացվել բանվորներից։ Նրանցում շնորհակալություն էր հայտնվում խմբագրությանը՝ այն մեծ օգնության համար, որ թերթը ցույց էր տալիս աշխատավոր ժողովրդին։ 1916 թվականի դեկտեմբերի 11-ի № 49-ում զետեղված «Մի տարի» խորագրով առաջնորդողում քննարկվում էր թերթի մեկ տարվա կատարած աշխատանքը հայ իրականության մեջ, ցույց էր տրվում, թե նա ինչպես է օգնել պրոլետարիատին ու աշխատավոր գյուղացիությանը՝ նրան սոցիալիստական գիտակցականության բերելու գործում։ «...Հայ իրականության մեջ «Պայքար»-ը ունեցել է իր առանձին դեմքը,— ասված է առաջնորդողում։ Ներկա համաշխարհային պատերազմն իր բազմաթիվ ավերումների հետ միասին ընդհանուր շփոթ առաջ բերեց և դեմոկրատական շարքերում, սակայն, «Պայքար»-ը հավատարիմ (երկու տող գրաքննության կողմից հանված է) սկզբունքներին, մնաց այն սակավաթիվների շարքում, որոնց ո՛չ մի արտաքին ուժ, ո՛չ մի ժամանակավոր շփոթ չէր կարողացել հանել իրենց սեփական դիրքերից...»

«Պայքար»-ը աշխատել է հնարավորության սահմաններում զարգացնել հայ ժողովրդի քննադատական միտքը, վերագնահատման ենթարկել անցյալը, պարզել կատարվածի իսկական արժեքը։

— Կռիվ նացիոնալիստական մղձավանջի դեմ, համերաշխություն դեմոկրատիայի միջև,— ահա «Պայքար»-ի գլխավոր խնդիրներից մեկը, գրում է «Պայքար»-ը։ Մոսկվայից ուղարկված նամակներից մեկում ասված է. «Ողջույն «Պայքար»-ին, միակ լուսատու աստղին հայկական մթին իրականության մեջ։ Հայ միջազգային դեմոկրատիան երբեք չի մոռանա այն մեծ գործը, որ սկսել եք դուք։ Իսկ հայ պրոլետարիատը մասնավորապես՝ միշտ մեծ հարգանքով կհիշի այն մարդկանց անունը, որոնք «Պայքար»-ի միջոցով օգնեցին նրան՝ միանալ միջազգային պրոլետարիատին։ Ողջո՛ւյն, ուրեմն, Ձեզ ու հաջողություն...»[1]։

Բանվորները, աշխատավոր գյուղացիները «Պայքար»-ը իրենց հարազատ թերթն էին համարում, անհամբեր սպասում նրա յուրաքանչյուր համարին։

Իր գոյության ընթացքում «Պայքար»-ը բանվորական շատ թղթակցություններ և նամակներ է տպագրել Երևանից, Թիֆլիսից, Բաքվից, Ալավերդուց, Ալեքսանդրապոլից, Ղափանից և Հայաստանի այլ վայրերից։

Էջմիածնի Գևորգյան ճեմարանի մի խումբ ռևոլյուցիոն ուսանողներ և

---

[1] «Պայքար», № 3 (58), 22 հունվարի, 1917։

աշակերտներ 1916 թվականին ուղարկելով իրենց ողջույնը «Պայքար»-ին գրել են. «Համախմբվենք «Պայքար»-ի շուրջը, աջակցենք նրան, որովհետև նա մերն է, պայքարենք միասին, ապագան էլ մերն է»։ «Պայքար»-ին նյութական օգնություն են ցույց տվել Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ներկայացուցիչները՝ հայեր, ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ։

Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ հայերեն լեզվով լույս տեսնող «Սոցիալ-դեմոկրատ» թերթը մայիսի 14-ի № 3-ում «Ողջույն «Պայքար»-ին» հոդվածում նշում է, թե մայիսի 9-ից այն դարձել է օրաթերթ, որը հայ բանվորության խոշոր հաղթությունն է։ Խոսելով «Պայքար»-ի հանդես գալու և նրա խնդիրների մասին, «Սոցիալ-դեմոկրատ»-ը գրում է. «Հրապարակ գալով Ադամամութին, «Պայքար»-ը եղավ այն կանթեղը, որ լույսի շող ձգեց հայկական համատարած խավարի մեջ։

Հայ բանվորությունը և բոլոր նրանք, որ շնչել են բանվորական օդը, չեն կարող մոռանալ այն բացառիկ պատմական դերը, որ կատարել է «Պայքար»-ը Կովկասյան իրականության մեջ»։

«Մամուլ» խորագրի տակ «Պայքար»-ը Անդրկովկասի մարքսիստական թերթերի էջերից ծավալուն քաղվածքներ էր տպագրում, պատմում նրանց նյութերի բովանդակությունը։ 1917 թվականի մայիսի 4-ին Թիֆլիսում վրացերեն լեզվով լույս տեսավ բոլշևիկյան «Բրձոլա» («Պայքար») թերթի առաջին համարը։ «Պայքար»-ը ողջունում է նոր թերթի երևան գալը, հայ ընթերցողին ծանոթացնում նրա ուղղության ու բովանդակության հետ։ 1917 թվականին «Բրձոլա»-ն ջանում է հավատարիմ մնալ 1901—1902 թվականների անլեգալ մարքսիստական «Բրձոլա»-ի սկզբունքներին։ Հին «Բրձոլա»-ի գրաշարներ Թեոդրիան և Վլ. Դումբաձեն, որ աշխատանքի էին անցել նոր, լեգալ «Բրձոլա»-ում, գրել են. «Մենք աշխատել ենք անլեգալ «Բրձոլա»-ի վրա, տանջվել ենք, խոնավ ջրհորներից անցկացրած թունելների միջոցով պրոլետարական ազատ խոսք ենք հյուսել, լույս աշխարհ հանել. այժմ արժանանում ենք այդ նույն «Բրձոլա»-ն ազատ կարգերում լույս ընծայել. մեծ է մեր հրճվանքը, մեծ է մեր տոնը և չենք կարող չողջունել «Բրձոլա»-ի երևան գալը»։

«Պայքար»-ը իր ընթերցողներին հիշեցնում է, որ դրանք այն գրաշարներն են, այն «անհայտ հերոսները», որոնց երախտապարտ ենք նաև մենք, դրանք այն գրաշարներն են, որոնք հայերեն չիմանալով, ընդհատակում հայերեն լեզվով պրոլետարական գրականությամբ հեղեղում էին Անդրկովկասի հայաբնակ վայրերը։

* * *

«Պայքար»-ի խմբագրական կազմը միատարր չէր. նրան մասնակցում էին նաև մենշևիկ-ինտերնացիոնալիստները։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո, երբ մենշևիկները, էսեռները կանգնել էին ժամանակավոր ռեակցիոն կառավարության պաշտպանության դիրքերում, Վ. Ի. Լենինը իր «Նամակներ հեռվից» և Ապրիլյան թեզիսներով կոչ արեց բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից անցնել դեպի սոցիալիստական ռևոլյուցիան։ Բոլշևիկների և մենշևիկների միջև եղած սկզբունքային խոր տարաձայնություններն իրենց արտահայտությունը գտան «Պայքար»-ի շուրջը համախմբված բոլշևիկների և մենշևիկների միջև։ Մենշևիկները ռևոլյուցիայի հարցերում կանգնած էին օպորտունիստական դիր-

քերի վրա։ Մենշևիկները 1917 թվականի հուլիսից սկսած բացահայտ կերպով հակաբոլշևիկյան գիծ են վարում։ Նրանք ուժեղացնում են իրենց ազդեցությունը և ի վերջո զավթում խմբագրական ղեկավար պոստերը։ Բոլշևիկները գտնելով, որ այլևս անհամատեղելի է մենշևիկների հետ աշխատել միևնույն օրգանում, հեռանում են թերթից։ Հունիսի 16-ին, «Պայքար»-ում լույս է տեսնում բոլշևիկների բաց նամակն՝ ուղղված ընթերցողներին և պարտիականներին։ «Մենք «Պայքար»-ի խմբագրական կազմի մեծամասնական (բոլշևիկ) անդամներս և աշխատակիցներս,— ասված էր նամակում,— անկարող լինելով այսուհետև աշխատել... մենշևիկների հետ, հեռանում ենք թերթից։ Մեր և մենշևիկների միջև եղած տարաձայնությունները այժմ կրում են ոչ միայն տակտիկական, այլև սկզբունքային-ծրագրային բնույթ»։ Այնուհետև նշվում է, որ այդ տարաձայնությունները հատկապես դրսևորվում են ժամանակավոր կառավարության, պատերազմի և այլ հարցերի գնահատման գործում։ «Մենք հեռանում ենք,— ասված է նամակում,— համոզված, որ Ռուսաստանի մեծ հեղափոխությունը ավելի քան երբևիցե պարտք է դնում պրոլետարական կուսակցության վրա, թոթափել իր ուսերից մանր-բուրժուական և կցորդ տարրերը, որ գոյություն ունեին մեր կուսակցության մեջ»։

«Պայքար» թերթից հեռացող բոլշևիկները իրավացի կերպով ցույց էին տալիս, որ մենշևիկները գլորվել են «պաշտպանողական» օպորտունիստական ճահիճը, բացահայտորեն դավաճանում են ռևոլյուցիայի, պրոլետարիատի ազատագրական մեծ գործին։

Նամակն ստորագրել էին Ստ. Շահումյանը, Ա. Մռավյանը, Ս. Խանոյանը, Ա. Ամիրյանը, Մ. Մելիքյանցը, բանվոր Գարագաշը, Հ. Կամարին, Ա. Կարինյանը, Հ. Հակոբյանը, Գ. Հայկունին, Ան. Վարդանյանը, Սիմակը, Հովհ. Պողոսյանը և ուրիշներ։

Թերթի մենշևիկյան խմբագրությունը նույն համարում տպագրել է «Մեր պատասխանը» երկարաշունչ հոդվածը, որի մեջ փորձում էր արդարացնել մենշևիկներին, մեղքը գցել բոլշևիկների վրա։ Բայց իզուր։ Փաստը կատարված էր, մենշևիկների դավաճանությունը ակնհայտ էր։ Բոլշևիկները ստեղծեցին իրենց օրգանները. Թիֆլիսում՝ «Բանվորի կոիվը», Ալեքսանդրապոլում՝ «Նոր կյանքը», որոնք խոշոր դեր կատարեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման և իրագործման շրջանում։

Այսպիսով, «Պայքար»-ը իր առաջին էտապում, մինչև 100-րդ համարը, ուներ բոլշևիկյան ուղղություն, այն ճշմարտություն էր քարոզում և փարոսի պես վառվելով լուսավորում հայ կյանքի մթին խավարը։ «Պայքար»-ը երկրորդ էտապում, 100-րդ համարից հետո, ուներ մենշևիկյան ուղղություն, այն օպորտունիզմի օրգան էր, որը փորձում էր հայ աշխատավորությանը շեղել իր նպատակից, հեռու պահել նրան սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող պայքարից։ Բանվորներն ու գյուղացիները շուտով երես դարձրին «Պայքար»-ից և նոանդուն աջակցություն ցույց տվին բոլշևիկյան նոր հրատարակություններին։ «Պայքար» թերթը արժանավոր տեղ է գրավում Անդրկովկասի բանվորական մամուլի պատմության մեջ։